ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

2 օգոստոսի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

107
(2957)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՆՉՊԵՂ Է ՆՈՐ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿՎԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Արցախի Հանրապետության պաշտպանության նախարար-պաշտպանության բանակի հրամանատար Կամո Վարդանյանը նշանակվել է ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի խորհրդական: Այս մասին մեզ հետ զրույցում հաստատեց հենց ինքը՝ Կամո Վարդանյանը (Թիվ մականունով):

Հիշեցնենք, որ 2020 թվականի պատերազմի ավարտից մեկ տարի հետո Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանի հրամանագրով՝ սեպտեմբերի 11-ին գեներալ-մայոր Կամո Վարդանյանը նշանակվել էր Արցախի Հանրապետության պաշտպանության նախարար-պաշտպանության բանակի հրամանատար:

Վերջինիս հրամանատարության օրոք հենց Արցախը հանձնվեց հակառակորդին:

Ավելին՝ Արցախը հանձնելուց առաջ՝ Կամո Վարդանյանը նաեւ ողջ հանրապետության սպառազինությունը գեղեցիկ մատուցմամբ հանձնեց Ադրբեջանին:

Եվ չի բացառվում, որ հայրենիքի եւ սպառազինության հանձնումը թշնամուն իր գինն է ունեցել. Կամո Վարդանյանն ու Արցախի նախագահ Սամվել Շահրամանյանը Արցախից վերադառնալիս նույն ինքնաթիռում են եղել, ու ինքնաթիռով վայրէջք կատարել Սիսիանում:

Հիմա Շահրամանյանը Նիկոլ Փաշինյանին մեղադրում է Արցախը հանձնելու համար, իսկ Վարդանյանը Նիկոլ Փաշինյանի իշխանության կողմից պաշտոնի է նշանակվում. մեղմ ասած՝ անհասկանալի իրավիճակ է:

«Ժողովուրդ» օրաթերթը Կամո Վարդանյանին հարց ուղղեց այն մասին, որ, լինելով ՊԲ վերջին հրամանատար, հայրենիքը հանձնելուց հետո ինչպես է նոր պաշտոն ստացել, ինչին նա արձագանքել է. «Պարոն Վարդանյանը մնացել է ՊԲ-ում՝ մինչեւ ՊԲ-ից վերջին մարդիկ դուրս գան, զոհված, անհետ կորած զինծառայողների որոնումներ անեն: Ինչ հանգամանքներում դուրս եկա՞վ....Այդպես դուրս եկավ»:

Մեր պնդմանը, որ պաշտոնն ավելի թանկ է, քան հայրենիքը չհանձնելը, նա նշեց. «Կամո Վարդանյանը պատահական է ողջ մնացել, ոչ միայն վերջին՝ այլեւ բոլոր պատերազմներում, այսքանը»:

«Ժողովուրդ» օրաթերթի հաջորդ համարը լույս կտեսնի 20.8.2024-ին:

Խորհրդարանական ընդդիմությունը սեպտեմբերին հանդես կգա ԱԺ նոր հանձնաժողով ստեղծելու նախաձեռնությամբ: Հերթական քննիչ հանձնաժողովը զբաղվելու է հունիսի 12-ին ԱԺ բակում «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման ցույցի մասնակիցների նկատմամբ ոստիկանների գործողությունների ուսումնասիրությամբ: Հիշեցնենք, որ ընդդիմության հավաքի ժամանակ ուժայինները կիրառել էին հատուկ միջոցներ՝ լուսաձայնային նռնակներ, անգամ՝ «Զարյա 3» տեսակի արգելված հատուկ միջոցը: Դրանից ընդամենը օրեր անց՝ հունիսի 26-ին, առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը «հանկարծ» ապօրինի որոշում կայացրեց՝ մաքրագրելով հանցանքը: Նա փոխեց «Մարդու նկատմամբ գործադրվող հատուկ միջոցների կիրառման համար թույլատրելի չափանիշները հաստատելու մասին» հրամանն ու «Զարյա 3»-ի կիրառումը ներառեց թույլատրելի հատուկ միջոցների շարքում: «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրների հաղորդմամբ՝ քննիչ հանձնաժողով ստեղծելու մասով դիմումը արդեն մշակման փուլում է, ԱԺ աշնանային նստաշրջանի սկզբին այն կներկայացվի խորհրդարան: Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի համաձայն՝ «Քննիչ հանձնաժողով կարող է ստեղծվել պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջով, Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող եւ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերին վերաբերող փաստերը պարզելու եւ դրանք Ազգային ժողով ներկայացնելու նպատակով՝ իրավունքի ուժով ստեղծվում է Ազգային ժողովի քննիչ հանձնաժողով»:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններից հաշվետու ժամանակահատվածում 721 ծանուցումների հիման վրա ստացել եւ հայտարարագրման համակարգ է մուտքագրել 1963 հայտարարատու պաշտոնատար անձանց՝ պաշտոնի նշանակվելու կամ պաշտոնից ազատվելու վերաբերյալ տվյալներ, որոնք վերաբերում են 2843 փոփոխությունների: Վերը նշված փոփոխություններից 1423-ը եղել են պաշտոնեական պարտականությունները ստանձնելու, 1420-ը՝ պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու մասին: Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ համակարգում գրանցված, գործող պաշտոնատար անձանց թիվը կազմել է 6158: Ըստ Հանձնաժողովի հաշվետվության՝ հայտարարատու պաշտոնատար անձանց պաշտոնի նշանակվելու կամ պաշտոնից ազատվելու վերաբերյալ ծանուցումների տվյալներում մշտապես առկա են եղել մի շարք խնդիրներ, մասնավորապես, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից դրանք չէին ներկայացվում «Հանրային ծառայության մասին» օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացված ծանուցմանը կցված չէր լինում համապատասխան ակտի պատճենը, Հանձնաժողովի սահմանած ձեւաթուղթը լրացված էր լինում անհամապատասխանություններով: Հարկ է նշել, որ պաշտոնեական պարտականությունների դադարեցման վերաբերյալ հայտարարագրերի թիվը վերջին երեք տարիներին տարեցտարի աճել է:

Արտաշատ համայնքում չարաշահումների գործը կհասնի խոշոր ձկներին: Հակակոռուպցիոն կոմիտեի կալանավորումները դեռ ընթացքի մեջ են: Սպասենք զարգացումներին՝ տեսնելու, թե ովքեր կհայտնվեն թիրախում: Չի բացառվում, որ գործը հասնի հարկայինի պաշտոնյաներին ու մարզի պաշտոնյաներին: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Արտաշատ համայնքում շինարարական աշխատանքների ընթացքում կատարված առերեւույթ հափշտակությունների եւ պաշտոնատար անձանց կողմից կաշառք ստանալու դեպքեր են բացահայտվել: Վարույթի շրջանակում հանրային քրեական հետապնդում է հարուցվել 9 անձի նկատմամբ: Նրանք մեղադրվում են առանձնապես խոշոր չափերի կաշառք ստանալու, կաշառք տալու, առանձնապես խոշոր չափերի խարդախություն կատարելու համար: Մեղադրյալներից 5-ի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը: Կալանավորված անձանցից 2-ը հարկային տեսուչներ են:

ԶՐՈՒՅՑ

«ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՈՉ ՄԻ ԷԱԿԱՆ ԲԱՆ ՉՏՎԵՑ»

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ԱԺ «Հայաստան» խմբակցության դատգամավոր Գեղամ Մանուկյանը, անդրադառնալով Ռուբինյան-Քըլըչ հանդիպմանը, նշում է՝ ոչինչ չտվող հանդիպում էր, միայն՝ ժպիտներ, լուսանկարներ ու վերջ:

-Միակ «օգուտը» եղավ այն, որ Նիկոլ Փաշինյանը, Ռուստամ Բադասյանը նոր ասֆալտի ֆոնին վիդեո կունենան, - ասում է ընդդիմադիր պատգամավորը:

-Պարոն Մանուկյան, երեքշաբթի օրը՝ շուրջ երկու տարվա ընդմիջումից հետո, տեղի ունեցավ Հայաստանի եւ Թուրքիայի ներկայացուցիչների հերթական հանդիպումը: Ինչպես ասվում է տարածված հաղորդագրության մեջ՝ կողմերը բավականին դրական են գնահատել հանդիպման արդյունքները, պայմանավորվել են շարունակել սահմանի բացման աշխատանքները, հեշտացնել վիզաների ընթացքը: Սակայն այսօր լրիվ հակառակ պատկերը տեսանք: Թուրքիայի արտգործնախարարը հայտարարել է, որ սահմանի բացումը հնարավոր կլինի միայն այն դեպքում, եթե Հայաստանը եւ Ադրբեջանը հարաբերությունները կարգավորեն եւ պայմանագիրը վերջապես կնքվի: Ամփոփելով հանդիպման արդյուներն ու վերոնշյալ հայտարարությունը՝ ի՞նչ կարող ենք արձանագրել:

-Երեկ մի հարցազրույցում նշել եմ, որ դեռեւս սպասողական վիճակի մեջ եմ, քանի որ դեռեւս բոլոր հայտարարությունները չեն եղել: Ճիշտն ասած՝ հարցազրույցի էի շտապում, երբ հրապարակվեց Թուրքիայի արտգործնախարարության հայտարարությունը:

Հիմա քաղաքական գործչի տեսանկյունից հարց Ռուբեն Ռուբինյանին՝ «բա ու՞ր մնաց առանց նախապայմանների բանակցությունների մասին մի քանի անգամ արված գրավոր հայտարարությունն ու այդ հարցում ունեցած իրենց հպարտությունը, երբ Թուրքիան ամեն օր նախապայմաններ է առաջադրում, իսկ Հայաստանի Հանրապետության իշխանությունը կատարում է Թուրքիայի՝ նախկինում հնչեցրած բոլոր նախապայմանները»:

Ինչ վերաբերում է հանդիպմանը, ապա համոզված չեմ, որ հաղորդագրության տեքստում սահմանները բացելու վերաբերյալ խոսք է եղել: Աննորմալ իրավիճակ է ստեղծվել: Մարգարայի կամրջի վրա, որը ամբողջությամբ վերանորոգվեց՝ արժեցնելով միլիարդավոր դրամներով, Նիկոլ Փաշինյանի «Փի Ար»-ի մաս է դարձել. կանգնում եւ խոսում են երկաթուղու մասին: Եվ ո՛չ թե երկաթուղու շահագործման, այլ Աքիաքափ-Ախուրիկ հատվածի տեխնիկական հնարավորությունների մասին: Նախ՝կա՞մ մարդ, դիվանագիտական կորպուս, որը պատկերացնում է, թե ինչի մասին է խոսքը:

Դեռեւս 2012 թվականին տեսաֆիլմով մանրամասն անդրադարձել եմ սրան: Աքիաքափից հետո կա Դոլուքափ կայարանը, որը վերջինն է: Այստեղից հետո երկաթուղին մտնում է Հայաստանի Հանրապետության ներկայիս տարածք:

Աքիաքափից մինչեւ Դոլուքափը եւ Դոլուքափից մինչեւ Ախուրիկ երկաթուղին ամբողջությամբ ավերված է: Իրենք պայմանավորվում են պարզապես տեխնիկական կարիքներն ապահովելու մասին, ո՛չ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին խոսք կա, ո՛չ սահմանները բացելու մասին խոսք կա, փոխարենը խոսք կա դիվանագիտական անձնագրով երրորդ երկրի քաղաքացիների համար մուտքի ազատության: Սակայն այստեղ հարց է, թե երրորդ երկրի քաղաքացի ասելով՝ ում նկատի ունեն: Սա Թուրքիայի համար մի փոքր կույրաղիքային հատված է. Կարսից հետո անգամ տուրիստների համար հետաքրքրություն չներկայացնող հատված է, ուր մնաց՝ երրորդ երկրի քաղաքացիները այստեղով անցնեն:

Թուրքիան այս հանդիպումներն ու բանակցություններն օգտագործում է արտաքին հարաբերությունների դաշտում սեփական իմիջի բարձրացման համար՝ ցույց տալու, որ կոնստրուկտիվ է, որ հարեւանների հետ ցանկանում է հարցեր լուծել: Սակայն, քանի որ այստեղ կոմունիկացիոն հարցի լուծումը Թուրքիայի շահից չի բխում, ապա բացարձակ չի կարող դրական ազդեցություն թողնել Թուրքիայի տնտեսության վրա:

Բացի դրանից՝ երկաթուղին տնտեսապես մեծ ծախս է:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՄԲԻՑԻԱՆԵՐ, ԹԵ՞Ր ՎԱՂՈՒՑ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Ի՞ՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

Վերջին շրջանում Մերձավոր Արեւելքում օրեցօր լարվածությունը մեծանում է, ինչը կարող է նաեւ տարածաշրջանային լուրջ հետեւանքներ թողնել, եւ, այդ թվում, բացասաբար ազդել Հարավային Կովկասում առկա ռազմաքաղաքական իրադրության վրա:

Մերձավոր Արեւելքում բուն պատերազմական գործողությունները սկսվեցին 2023 թվականի հոկտեմբերի 7-ին եւ այդ օրվանից ի վեր զոհվել է ավելի քան 39 հազար պաղեստինցի: Սա պատերազմ է, որը կոտրեց Իսրայելի անխոցելիության մասին կարծրատիպը:

Շարունակվող լարվածության ֆոնին 2024 թվականի հուլիսի 27-ին Իսրայելի կողմից վերահսկվող Գոլանի բարձունքները հրթիռակոծվեցին Լիբանանի կողմից, որի հետեւանքով ավելի քան 10 զոհ եւ բազմաթիվ վիրավորներ կան: Նույն օրը ԱՄՆ-ում գտնվող Իսրայելի վարչապետ Բենյամին Նաթանյահուն հայտնեց, որ շտապ վերադառնում է:

Հուլիսի 30-ին Իսրայելն անցավ բացահայտ գործողությունների եւ հարվածներ հասցրեց Լիբանանում «Հըզբալլահ» կուսակցության կայաններին՝ մեղադրելով երեք օր առաջ տեղի ունեցած հրթիռակոծության համար:

«Հըզբալլահ»-ն իր հերթին հայտարարեց, որ այդ գործողություններն անպատիժ չեն մնալու:

Հուլիսի 31-ի առավոտյան Իրանի Իսլամական Հանրապետության տարածքում սպանվեց «Համաս»-ի ղեկավար Իսմայիլ Հանիեն: Շարժումն իր առաջնորդի սպանության համար պատասխանատու է համարում Իսրայելին եւ ԱՄՆ-ին:

Խոսելով վերջին օրերին ստեղծված իրավիճակի մասին՝ պետք է նշել, որ դեռեւս հուլիսի 28-ին ավիաընկերությունները Լիբանանից դուրս են բերել իրենց ինքնաթիռները, իսկ արդեն հուլիսի 30-ին բազմաթիվ թռիչքներ հետաձգվել եւ չեղարկվել են:

Ինչու՞ Իսրայելը բացահայտ ռազմական գործողությունների անցավ: Հարկ է նշել, որ իշխանության գալուց ի վեր՝ Բենիամին Նաթանյահուի դեմ պայքար է սկսվել. նրա նկատմամբ բազմաթիվ մեղադրանքներ են հնչում՝ պետական դիրքի չարաշահման վերաբերյալ: Այս պահին Իսրայելի վարչապետն իր առջեւ դրված խնդիր ունի՝ հնարավորինս երկար մնալ պաշտոնին՝ հակառակ դեպքում կալանավորումն անխուսափելի կլինի:

«Հըզբալլահ»-ի դեմ ռազմական գործողությունները հիանալի առիթ են երկրում լարված իրադրություն ստեղծելու, քաղաքական ներքին բախումները ժամանակավորապես հետաձգելու եւ հաջողության դեպքում՝ փառքի արժանանալու համար: Հետեւաբար, անհասկանալի է՝ վերջին օրերին սկսված ռազմական գործողությունները անձնական ամբիցիաների՞, թե՞ տարիների հիմնախնդրի հերթական պոռթկման արդյունք են:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱՊԱՀՆԵՐԸ ԵՐԵԿ ՀԵՌԱՑԱՆ

Ռուսաստանի ԱԴԾ սահմանապահ ծառայության ներկայացուցիչները հայկական կողմի պահպանությանն են հանձնել «Զվարթնոց» օդային անցակետի պետական սահմանը:

Արձանագրությունը ստորագրել են ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի հրամանատար Էդգար Հունանյանը եւ Հայաստանում Ռուսաստանի անվտանգության դաշնային ծառայության սահմանապահ վարչության պետ, գեներալ-լեյտենանտ Ռոման Գոլուբիցկին:

ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ հանդիպումները շարունակվում են, մենք նաեւ պետք է պատրաստենք մեր սցենարը ադրբեջանա-հայկական հարաբերությունների կարգավորման դեպքում:

Այս մասին Sabah թերթին տված հարցազրույցում հայտարարել է Թուրքիայի արտգործնախարար Հաքան Ֆիդանը:

Նրա խոսքով՝ այս ուղղությամբ աշխատանքները ներկայում շարունակվում են:

«Ի վերջո, մենք կկարողանանք իրականացնել դրական սցենար, այն է՝ բացել Հայաստանի հետ սահմանը», - նշել է Ֆիդանը:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԸՆԹԱՑՔԸ

Հայաստանը եւ Ադրբեջանը զգալի առաջընթաց են գրանցել խաղաղության պայմանագրի վերջնական ձեւակերպման հարցում. այս մասին Հադսոնի ինստիտուտում տեղի ունեցած քննարկումների ժամանակ ասել է այցով ԱՄՆ-ում գտնվող Ադրբեջանի նախագահի հատուկ հանձնարարությունների գծով ներկայացուցիչ Էլչին Ամիրբեկովը:

Խոսելով խաղաղության պայմանագրի ստորագրման հնարավոր ժամկետների մասին՝ Ամիրբեկովը նշել է, որ դա մեծապես կախված է լինելու հայկական կողմի պատրաստակամությունից՝ վերացնելու միակ մնացած խոչընդոտը՝ Հայաստանի Սահմանադրությամբ ամրագրված «տարածքային պահանջները Ադրբեջանի նկատմամբ»:

«Խաղաղության համաձայնագրի տեքստի մեծ մասը համաձայնեցված է: Մնացած բոլոր հարցերը կարող են լուծվել, բայց մենք չենք կարող ավելի հեռուն գնալ եւ խաղաղության պայմանագիր կնքել՝ աչք փակելով այս հակամարտության բուն էկզիստենցիալ պատճառի վրա, այն է՝ Հայաստանի Սահմանադրությամբ ամրագրված «տարածքային պահանջները Ադրբեջանի նկատմամբ»: Մենք դեռ վստահ չենք Հայաստանի իշխանությունների անկեղծությանը, երբ նրանք ասում են, որ հրաժարվել են Ադրբեջանի նկատմամբ տարածքային պահանջներից, քանի որ ակնհայտ հակասություն կա նրանց պաշտոնական հրապարակային հռետորաբանության եւ սահմանադրական եւ իրավական դաշտի հետ առկա իրավիճակի միջեւ: Այս հակասությունը պետք է լուծվի, որպեսզի ճանապարհ բացվի դեպի հնարավոր խաղաղություն», - ասել է նա:

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԸ

Վրաստանում ուժի մեջ է մտել օտարերկրյա գործակալների մասին օրենքը:

Սա նշանակում է՝ օրենքով, երկրից դուրս 20 տոկոսից ավելի ֆինանսավորվող շահույթ չհետապնդող կազմակերպությունները եւ լրատվամիջոցները պետք է գրանցվեն որպես կազմակերպություններ՝ «օտար տերության շահերը հետապնդող կազմակերպություններ»:

Կանոնները չպահպանող կազմակերպությունները կտուգանվեն մինչեւ 25 հազար լարիով:

ԵՄ-ն կասեցրել է Վրաստանի ինտեգրացիան՝ վիճահարույց օրենքի ընդունման պատճառով:

ԱՄՆ-ը պատժամիջոցներ է սահմանել վրացի պաշտոնյաների նկատմամբ, ովքեր մասնակցել են օրենքի ընդունմանը:

ՄԱԴՈՒՐՈՆ ՍՊԱՌՆԱՑԵԼ Է ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՄԲ

Վենեսուելայի նախագահ Նիկոլաս Մադուրոն նախազգուշացրել է, որ չի վարանի բնակչությանը «նոր հեղափոխության» կոչ անել, եթե նրան ստիպեն «հյուսիսամերիկյան իմպերիալիզմը եւ ֆաշիստ հանցագործները»:

Մադուրոյի մեկնաբանությունները հնչել են երկրում շարունակվող զանգվածային ցույցերի ֆոնին, որոնք տեղի են ունենում նախագահական ընտրություններում նրա վիճելի հաղթանակից հետո:

«Ես չէի ցանկանա գնալ հեղափոխություն անելու ուղիով: Մենք ցանկանում ենք շարունակել այն ճանապարհը, որը նախանշել է Չավեսը: Բայց եթե հյուսիսամերիկյան իմպերիալիզմը եւ ֆաշիստ հանցագործները մեզ ստիպեն, իմ ես չեմ վարանի՝ ժողովրդին նոր հեղափոխության կոչ անելու համար», - ասել է Մադուրոն Կարակասում միջազգային լրատվամիջոցների հետ մամուլի ասուլիսի ժամանակ:

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՄԱՌԵՑՎԵՆ

Իսրայելի կառավարության եւ արմատական պաղեստինյան ՀԱՄԱՍ շարժման միջեւ պատանդների վերաբերյալ բանակցությունները, ամենայն հավանականությամբ, շաբաթներ կամ նույնիսկ ամիսներ շարունակ կսառեցվեն:

Նշվում է, որ Իսրայելի կաբինետի անդամներին հայտնել են կանխատեսման մասին, ըստ որի՝ Բեյրութում շիական «Հըզբալլահ» շարժման ռազմական առաջնորդ Ֆուադ Շոկրի եւ Թեհրանում արմատական պաղեստինյան ՀԱՄԱՍ շարժման քաղբյուրոյի ղեկավար Իսմայիլ Հանիեի սպանությունը կհանգեցնի բանակցությունների դադարեցմանը:

Միաժամանակ չի բացառվել, որ Իրանն իր տարածքից կհրթռակոծի Իսրայելը:

Հիշեցնենք, որ հուլիսի 31-ի առավոտյան հայտարարվեց ՀԱՄԱՍ շարժման առաջնորդ Իսմայիլ Հանիեի մահվան մասին, ինչը հաջորդել էր Իսրայելի կողմից «Հըզբալլահ» կուսակցության կենտրոնակայաններին հարվածելուն:

ՏԵՍԱԿԵՏ

«ԻՍՐԱՅԵԼԸ ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՊԱՏԵՐԱԶՄ ՀՐԱՀՐԵԼ»

Վերջին 2 օրվա ընթացքում Մերձավոր Արեւելքում գործողություններ են սկսվել եւ ընթանում, որից շատերը հետեւություններ են անում, որ այդ ամենն իրենից անվտանգայնության մեծ հարց է ներկայացնում եւ կարող է ազդել մեր իսկ տարածաշրջանի վրա:

Քաղաքագետ Սուրեն Սուրենյանցը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց, որ Իսրայելի գործող վարչապետ Նեթանյահուի ցանկությունն այն է, որ մեծ եւ արյունալի պատերազմ հրահրի՝ Իրանի եւ ԱՄՆ-ի մասնակցությամբ, սակայն մեծ լավատեսություն ունի, որ Նեթանյահուի այդ ցանկությունն իրականություն չի դառնա:

«Անցած տարվա հոկտեմբերի 7-ից սկսած, երբ տեղի ունեցավ սկզբում Համասի հարձակումը Իսրայելի վրա, հետո Գազայի հատվածում արյունոտ պատերազմը՝ Իսրայելի իրականացրած, ես մի քանի անգամ առիթ ունեցել եմ ասելու, որ Իսրայելի գործող վարչապետ Նեթանյահուի ցանկությունն այն է, որ մեծ պատերազմ հրահրի Իրանի եւ ԱՄՆ-ի մասնակցությամբ, սակայն կարծում եմ, մի փոքր լավատեսություն ունեմ, որ Նեթանյահուի այդ ցանկությունն իրականություն չի դառնա, որովհետեւ, նախ, Իրանի Իսլամական Հանրապետությունում հասկանում են դա, եւ հույս ունեմ՝ զգուշավորություն կցուցաբերեն, իսկ երկրորդը, ԱՄՆ-ի իսթաբլիշմենթում (գերիշխող սոցիալական խումբը, վերնախավը, որը վերահսկում է քաղաքականությունը, կազմակերպությունը կամ հաստատությունը) շատ մեծ դիմադրություն կա Նեթանյահուի այդ մտադրության հետ կապված»,- ասաց քաղաքագետը:

Քաղաքագետի դիտարկմամբ՝ այս լարվածությունը շարունակվելու է, եւ մեծ վտանգ կա, որ ինչ-որ կետից վերահսկողությունը կարող է դուրս գալ:

«Հիմա շատ ուշադիր պետք է հետեւել զարգացումներին: Հույս ունենանք, որ դիվանագիտական մեթոդներով եւ առաջին հերթին Թեհրանի եւ Վաշինգտոնի էլիտաների ողջամտության շնորհիվ հնարավոր կլինի խուսաբել մեծ պատերազմից, իսկ եթե այնուամենայնիվ իրավիճակը դուրս գա վերահսկողությունից՝ ոչ միայն Մերձավոր Արեւելքը, այլեւ Հարավային Կովկասը կներքաշվեն շատ արյունոտ պատերազմի մեջ, որի հետեւանքները շատ սարսափելի են, ուղղակի չեմ էլ ուզում կանխատեսել»,- ասաց քաղաքագետը:

Սուրենյանցը, անդրադառնալով այն հարցին՝ արդյո՞ք Իսրայելը գերտերությունների կողմից աջակցություն կստանա, ասաց. «Իսրայելի հույսն այն է, որ պատերազմի մեջ կներքաշի Իրանին, մյուս կողմից՝ կստանա ԱՄՆ-ի աջակցությունը: Միացյալ նահանգներում Նեթանյահուի այս մտադրությանը, հատկապես Գազայի իրադարձություններից հետո, շատ մեծ դիմադրություն կա: Հույս ունեմ, որ այնուամենայնիվ, գործը մեծ պատերազմին չի հասնի: Մյուս կողմից՝ ցանկացած իրադարձություն կարող է իրավիճակը դարձնել անվերահսկելի: Առայժմ այն կարծիքին եմ, որ թե՛ Թեհրանում, թե՛ Վաշինգտոնում ողջամտությունը կհաղթի եւ հնարավոր կլինի խուսաբել այնպիսի մի պատերազմից, որի ֆոնին ուկրաինական պատերազմը կարող է խամրել»:

Քաղաքագետի կարծիքով՝ Իրանում շատ լավ հասկանում են, որ Իսրայելի ցանկությունն իրեն պատերազմի մեջ ներքաշելն է, եւ, բնականաբար, պետք է այնպիսի ողջամիտ ու հավասարակշիռ քաղաքականություն վարել, որպեսզի այդ սցենարն իրականություն չդառնա, սակայն 100 տոկոսանոց ոչ մի երաշխիք չկա, որ պատերազմ չի լինելու:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

274 ԴԻՄՈՒՄ՝ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը հաշվետու ժամանակահատվածում ստացել է հայտարարագրերում փոփոխություն կատարելու վերաբերյալ 274 դիմում, որից 208 դիմումը ստացել է հայտարարատու պաշտոնատար անձանց ընտանիքի անդամների կողմից, 64-ը՝ հայտարարատու պաշտոնատար անձանց ընտանիքի անդամների կողմից, 2 դիմում ստացվել է կուսակցությունների ղեկավար մարմնի անդամների կողմից:

Հայտարարագրերում փոփոխություն կատարելու վերաբերյալ ատացված դիմումներից 2-ը մերժվել են:

1-ին դիմումը մերժվել է, քանի որ դիմումատուի ներկայացված հայտարարագրերը ճանաչվել են արտավարույթային փաստաթղթեր, իսկ 2-րդ դիմումը մերժվել է, քանի որ հայտարարատուի հայտարարագրում առկա անհամապատասխանություններն այլ կերպ բացահայտված էին եղել մամուլի ուսումնասիրությամբ:

Հանձնաժողովի հաշվետվությունից տեղեկանում ենք, որ մյուս դիմումների հիման վրա համապատասխան փոփոխությունների կատարման գործընթացն ամբողջությամբ հնարավոր չի եղել ապահովել, քանի որ այդ դիմումների մի մասի վերաբերյալ է հայտարարագրման նախկին էլեկտրոնային համակարգում առկա հայտարարագրերին: Նախկին համակարգի հայտարարագրերի ուղղման գործընթացը հնարավոր կլինի իրականացնել 2024 թվականի երկրորդ կիսամյակում, իսկ նոր համակարգում հայտարարագրված տվյալներում փոփոխությունների կատարման գործընթացն արդեն իսկ մեկնարկել է:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԻՐԱՆԱԳԵՏԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

Իրանագետ Վարդան Ոսկանյանն իր տելեգրամյան ալիքում անդրադարձել է վերջին օրերին Մերձավոր Արեւելքում առկա իրավիճակին:

Նա մասնավորապես գրել է. «Իրանը հազարամյակների պետականության ավանդույթ ունեցող երկրներից է, եւ վերջինիս լայնածավալ ուղղակի պատերազմի մեջ ներքաշելու, իսկ այնուհետեւ զոհի կարգավիճակով ԱՄՆ-ից համակողմանի եւ լիարժեք աջակցություն ստանալու փորձերը չեն կարող խիստ իրատեսական դիտարկվել:

Ներքաշման նման հերթական գործելաոճի դրսեւորում պետք է համարել նաեւ «Համասի» քաղաքական թեւի ղեկավար Իսմայիլ Հանիայի սպանությունը Թեհրանում՝ իսրայելական հատուկ գործողության հետեւանքով:

Բանն այն է, որ Իրանն առանց այն էլ բավական հաջող կարողանում է անուղղակի կերպով պայքարել տարածաշրջանային եւ արտատարածաշրջանային իր ախոյանների ու թշնամիների դեմ՝ Մերձավոր Արեւելքում ստեղծելով արբանյակ կառույցների եւ կազմակերպությունների նմանը չունեցող ցանց, որն էլ անհրաժեշտության դեպքում ուղղակի բախումների մեջ է մտնում հակաիրանական ուժերի հետ:

Նման անուղղակի ցանցային գործելաոճը ոչ միայն հնարավորինս խնայում է հենց Իրանի մարդկային ներուժը, այլ նաեւ հնարավորություն ստեղծում միանգամից մի քանի ճակատներով իր ախոյաններին ու թշնամիներին ներքաշելու անվերջանալի եւ խիստ ռեսուրսատար բախումների մեջ:

Այնպես որ, Իրան-Իսրայել ուղղակի լայնածավալ պատերազմի մասին կանխատեսումներն առայժմ այդքան էլ իրական չեն թվում, չնայած վառոդի տակառի նմանվող Մերձավոր Արեւելքում ցանկացած կայծ հղի է պատերազմական հրդեհի բռնկման վտանգով»:

Վ. ՔԵՐՈԲՅԱՆԸ ՉՈՒՆԻ՞ ԱՊԱՑՈՒՅՑ

ԻՆՉՈՒ Է ՀՐԱԺԱՐՎՈՒՄ ՑՈՒՅՑ ՏԱԼ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Էկոնոմիկայի նախկին նախարար Վահան Քերոբյանի, հաղորդավարուհի Լուսինե Թովմասյանի սկեսրոջ ու այլ անձանց մասով գործն արդեն Հակակոռուպցիոն դատարանում է, եւ երեկ առաջին դատական նիստն էր:

Հիշեցնենք, որ էկոնոմիկայի արդեն նախկին նախարար Վահան Քերոբյանին «Սիներջիի» վերաբերյալ քրեական գործով մեղադրանք է առաջադրվել, եւ նա տեւական ժամանակ կալանքի տակ էր ու վերջերս ազատ արձակվեց: Բանն այն է, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար ծառայություն ձեռք բերելու մրցույթի ընթացքում՝ կատարված առերեւույթ չարաշահումների վերաբերյալ քրեական վարույթով քրեական հետապնդում է հարուցվել 8 անձի նկատմամբ:

Մասնավորապես՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մի շարք պաշտոնատար անձինք, իրենց ղեկավար պաշտոնատար անձի հանձնարարությամբ, մրցույթի ընթացքում հանդիպումներ ու հեռախոսազրույցներ են ունեցել «Ս» ընկերության ներկայացուցիչների հետ, նրանց հետ քննարկել մրցույթի պայմանները, ընդհուպ՝ նրանց տրամադրել մրցակից «Հ» հիմնադրամի կողմից հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերը եւ նրանց օժանդակությամբ մրցույթի ընթացքում սահմանել այնպիսի նոր կամ փոփոխված պայմաններ, որոնց հիմնադրամի ներկայացրած փաստաթղթերը կարող են դիտվել չհամապատասխանող՝ հնարավորություն տալով ընկերությանը հեռացնել մրցույթից:

Սույն քրեական գործով մեղադրյալ էր ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի եղբոր կինը՝ Անի Գեւորգյանը, որը խոստովանեց, որ հանցանք է գործել, ու գործուն զղջալու հիմքով՝նրա եւ եւս մի քանի անձի մասով գործը կարճվեց, իսկ ահա հայտնի հաղորդավարուհի Լուսինե Թովմասյանի սկեսրայրը՝ «Սիներջի» ընկերության ղեկավար Աշոտ Հովհաննիսյանը, ինչպես նաեւ նախկին նախարար Վահան Քերոբյանը դեռ կռիվ կտան դատարանում»:

Դատական նիստի սկսվելուց առաջ՝ «Ժողովուրդ» օրաթերթը մի քանի հարց ուղղեց էկոնոմիկայի նախկին նախարար Վահան Քերոբյանին՝ մասնավորապես խնդրեց ցույց տալ իր, ԱԱԾ տնօրեն Արմեն Աբազյանի, փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի գրագրությունը:

Նշենք, որ էկոնոմիկայի նախկին նախարարը դատարանում խնդրանքով դիմել է դատավոր Մերի Մոսինյանին: Վահան Քերոբյանը նշել է, որ որդին ընդունվել է Միսիսիպիի համալսարան եւ ցանկանում է թույլտվություն ստանալ՝ որդուն համալսարան ճանապարհելու նպատակով երկրից դուրս գալու համար:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՔՐԳՈՐԾԵՐ՝ ԿԱՇԱՌՔԻ ՄԱՍԻՆ

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունից ստացված նյութերի հիման վրա ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթով կատարված նախաքննությամբ հիմնավորվել է, որ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի աշխատակիցներ Գ. Փ.-ն եւ Վ. Ք.-ն, նախնական համաձայնությամբ, խմբի կազմում, տարբեր տնտեսվարող սուբյեկտների օգտին դրսեւորած թողտվության եւ հովանավորչության համար նրանցից պահանջել եւ ստացել են յուրաքանչյուր դեպքում մինչեւ 90.000 ՀՀ դրամ կաշառք:

Մասնավորապես, նախաքննությամբ պարզվել է, որ վերը նշված պաշտոնատար անձինք 2023 թվականի օգոստոսից հոկտեմբերն ընկած ժամանակահատվածում՝ իրենց գործառույթներն իրականացնելու ընթացքում, ավտոգազալցման կայանների տնօրենների, հասարակական սպասարկման օբյեկտների սեփականատերերի, որոշ դեպքերում՝ դրանց պատասխանատու անձանց օգտին թողտվության, հովանավորչության եւ այլ ապօրինի գործողություն կատարելու, մասնավորապես՝ հիշյալ կառույցներում առկա հրդեհային անվտանգության կանոնների խախտումները չարձանագրելու, հակահրդեհային անվտանգության կանոններին համապատասխանելու վերաբերյալ դրական եզրակացություն տալու դիմաց որպես կաշառք պահանջել եւ ստացել են տարբեր չափերի գումարներ:

Գ. Փ.-ին եւ Վ. Ք.-ին մեղադրանքներ են ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով /8 դրվագ /, իսկ վերը նշված ընկերություններից մեկի տնօրեն Մ. Ս.-ին՝ 436-րդ հոդվածի 2- րդ մասի 3-րդ կետով:

Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան՝ ըստ էության քննվելու համար:

ԱՊՕՐԻՆԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԴԵՊՔ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ իրավապահները տեղեկություններ են ստացել, որ սահմանափակ ընկերություններից մեկի տնօրենի ցուցումով Մասիս համայնքի տարածքում՝ Սեւջուր կոչվող գետի ափերին, իրականացնում են ավազակոպճի ապօրինի հանքարդյունահանման աշխատանքներ: Ստուգմամբ պարզվել է, որ ՍՊԸ տնօրինությունը կամ իրավասու անձինք նույն ընկերության պատկանող տարածքում 2023 թ. դեկտեմբերի 28-ից մինչ օրս, ընդերքի պահպանման կամ օգտագործման պահանջները խախտելով, օրական ապօրինի արդյունահանել եւ վաճառել են ավազակոպճ՝ պետությանը պատճառելով առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս:

Ստուգմամբ հայտնաբերվել են գետի հունի վիճակի եւ կայունության փոփոխություններ, ընկերության գործողությունների հետեւանքով ընդերքին եւ շրջակա միջավայրին պատճառվել է էական վնաս, այն է՝ հանգեցրել է հողի որակի վատթարացման, արդյունահանվող օգտակար հանածոների կորստի, ինչն էլ առաջացրել է տվյալ վայրում առկա օգտակար հանածոների հետագա շահագործման դժվարացում:

Կազմված փաստաթղթերն ուղարկվել են Մասիսի քննչական բաժին, որտեղ նախաձեռնվել է քրեական վարույթ:

Վարույթի շրջանակում ՍՊ ընկերության չորս աշխատակից ձերբակալվել եւ տեղափոխվել են ոստիկանության Մասիսի բաժնի ձերբակալվածների պահման վայր:

Ոստիկանության Մասիսի բաժնի ծառայողների ձեռնարկած միջոցառումների արդյունքում վերոհիշյալ ՍՊ ընկերության կողմից, որպես պետությանը պատճառված վնաս, վերականգնվել է 10 միլիոն դրամ:

Կատարվում է նախաքննություն:

ԼՈՒՐԵՐ

ՎՐԱԵՐԹԻ ԳՈՐԾՈՎ

Հուլիսի 29-ին հաղորդում էր ստացվել այն մասին, որ նույն օրը՝ ժամը 12:50-ի սահմաններում, 27-ամյա անձի կողմից վարած «Մերսեդես» մակնիշի բեռնատարը Երան քաղաքի Աճառյան փողոցում, կանգառի մոտ, վարերթի է ենթարկել 3 հետիոտնի: Վրաերթի հետեւանքով Երեւան քաղաքի բնակիչներ 75-ամյա եւ 73-ամյա ամուսինները տեղում մահացել են, իսկ նրանց որդին՝ 48-ամյա տղամարդը, դիմել է բուժօգնության:

Դեպքի առթիվ ՀՀ ՔԿ ԵՔՔՎ ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով: Կատարվել է դեպքի վայրի զննություն, հարցաքննվել են ականատեսներ, նշանակվել են դատաբժշկական փորձաքննություններ: Ձեռք բերված փաստերի հիման վրա՝ բեռնատարի 27-ամյա վարորդին ներկայացվել է մեղադրանք՝ ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 3-րդ մասով: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել տնային կալանքը՝ համակցված 1մլն դրամի չափով գրավի եւ բացակայելու արգելքի հետ: Նախաքննությունը շարունակվում է:

Բուժկենտրոնում գտնվող 48-ամյա տուժողի վիճակը բավարար է:

Ծանուցում. Հանցանքի համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ԹՈՒՅԼԱՏՐԵԼ ԵՆ ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությամբ՝ կալանավորված անձը տեղափոխվել է այլ քրեակատարողական հիմնարկ՝ ընտանիքի հետ տեսակցությունները հնարավոր դարձնելու նպատակով», - տեղեկացնում են ՄԻՊ-ի գրասենյակից:

«Կալանավորված անձի փաստաբանը դիմել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աջակցությանը՝ իր վստահորդին կալանքի կրումը շարունակելու նպատակով այլ քրեակատարողական հիմնարկ տեղափոխելու հարցում:

Ըստ փաստաբանի՝ մեղադրյալի ընտանիքը, այդ թվում՝ երկու անչափահաս երեխաները, բնակվում են մարզում: Հետեւաբար, հաշվի առնելով ընտանիքի սոցիալական վիճակը, ընտանիքի բնակության վայրի եւ քրեակատարողական հիմնարկի հեռավորությունը, առկա են էական դժվարություններ վստահորդի եւ նրա անչափահաս երեխաների տեսակցությունները կազմակերպելու հարցում: Հաշվի առնելով նշված հանգամանքները, ինչպես նաեւ երեխայի լավագույն շահի սկզբունքը, Մարդու իրավունքների պաշտպանը խնդրի լուծման առաջարկով դիմել է պետական իրավասու մարմիններին: Իրավասու մարմինների հետ արդյունավետ համագործակցության արդյունքում փաստաբանի կողմից բարձրացված հարցը ստացել է լուծում. կալանավորված անձը տեղափոխվել է այլ քրեակատարողական հիմնարկ»,- նշված է հաղորդագրության մեջ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝հուլիսի 31-ից օգոստոսի 1-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 79 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԳՈՒՄԱՐ ՉԵՆ ՀԱՏԿԱՑՆՈՒՄ՝ ԴՊՐՈՑՆԵՐԸ ՆՈՐՈԳԵԼՈՒ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում ենք ուղարկել՝հարցնելով, թե մարզի պետական առողջապահական հիմնարկներից քանի՞սն ունեն վերանորոգման կամ հիմնանորոգման կարիք: Մարզպետարանից պատասխանել են. «ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի ենթակայության 21 բուժհիմնարկներից (ինչպես նաեւ նրանց կազմում գործող 39 բուժակա-մանկաբարձական կետերից) վերանորոգման, հիմնանորոգման եւ նորի կառուցման կարիք ունեն հետեւյալ բուժհիմնարկները եւ նրանց կազմում գործող բուժակա-մանկաբարձական կետերը.

1) Հաղարծինի ԱԱՊԿ ՊՈԱԿ-ի Ներքին Գոշի ԲՄԿ-ները՝ կառուցման կամ նոր վագոն-տնակի կարիք: 2) Գետահովիտի ԱԱՊԿ ՊՈԱԿ-ը՝ նոր շենքի կառուցման կարիք: 3)Իջեւանի ԱԱՊԿ ՊՈԱԿ-ի Լուսաձորի ԲՄԿ-ն՝ հիմնանորոգման կարիք: 4) Այգեհովիտի ԱԱՊԿ ՊՈԱԿ-ի Կայանավանի ԲՄԿ-ն՝ հիմնանորոգման կարիք: 5) Խաշթառակի ԱԱՊԿ ՊՈԱԿ-ի Լուսահովիտի ԲՄԿ-ն՝ հիմնանորոգման կարիք: 6) Սեւքարի ԳԲԱ ՊՈԱԿ-ի Աճարկուտի եւ Սարիգյուղի ԲՄԿ-ները՝ հիմնանորոգման կարիք 7) Նավուրի ԱԱՊԿ ՊՈԱԿ-ի Իծաքարի ԲՄԿ-ն՝հիմնանորոգման կարիք: 8) Նոյեմբերյանի ԲԿ ՓԲԸ-ի մանկական եւ ինֆեկցիոն բաժանմունքների շենքը՝ կառուցման կարիք եւ Ջուջեւանի ԲՄԿ-ն՝ հիմնանորոգման կարիք: 9) Այրումի ԳԲԱ ՊՈԱԿ-ը՝ նոր շենքի կառուցման կարիք: 10) Ոսկեվանի ԳԲԱ ՊՈԱԿ-ի Ոսկեպարի ԲՄԿ-ն՝ հիմնանորոգման կարիք: 11)Կողբի ԳԲԱ ՀՈԱԿ-ը՝ նոր շենքի կառուցման կարիք: 12)Բագրատաշենի ԳԲԱ ՊՈԱԿ-ի Դեբեդավանի ԲՄԿ-ն՝ հիմնանորոգման կարիք: 13) Ջորականի ԳԲԱ ՊՈԱԿ-ի Հաղթանակի ԲՄԿ-ն՝ հիմնանորոգման կարիք»: Մարզպետարանից տեղեկացել ենք նաեւ, որ Տավուշի մարզի 76 հանրակրթական դպրոցներից 10-ն ունեն հիմնանորոգման, 32-ը՝ վերանորոգման կարիք: Մարզի պետական առողջապահական հիմնարկների, հանրակրթական դպրոցների շենքերը նորոգելու համար պետական բյուջեից գումարներ չեն հատկացվում, իսկ Տավուշի մարզպետարանի պաշտոնյաներին պարգեւատրելու համար պետական սուղ բյուջեից տասնյակ միլիոնավոր դրամներ են հատկացվում: Տավուշի մարզպետարանից ստացված տվյալներով՝ մարզպետարանի պաշտոնյաները 2023 թվականի ընթացքում պարգեւատրվել են 71 միլիոն 960 հազար դրամի չափով, իսկ տարվա հուլիսի 15-ի դրությամբ մարզպետի աշխատակազմի աշխատակիցները ստացել են 33 միլիոն 484 հազար 235 դրամ պարգեւավճար: Հավելենք, որ Տավուշի մարզպետարանի ենթակայության տակ ընդամենը երկու ոլորտներ են գործում՝ մարզի հանրակրթական դպրոցները եւ մարզի պետական առողջապահական հիմնարկները:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՂԵՏԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ

ԳԱԶԱԲԱՇԽՄԱՆ ՑԱՆՑԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՎԱԾ Է

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Լոռու գազաֆիկացման եւ գազամատակարարման մասնաճյուղի (ԳԳՄ) կողմից ամբողջությամբ վերականգնվել են գազաբաշխման ցանցի գազատարները, որոնք վնասվել էին մայիսի 26-ին տեղի ունեցած գետերի վարարման արդյունքում ստեղծված աղետի հետեւանքով:

Լոռու ԳԳՄ Թումանյանի տարածքային տեղամասի (SS) սպասարկման գոտում վնասվել էին միջին եւ ցածր ճնշման գազատարներ Ալավերդի, Ախթալա քաղաքներում, Հաղպատ, Քարկոպ եւ Նեղոց բնակավայրերում:

Թումանյանի SS պետի տեղակալ Արթուր Իսրայելյանի տվյալներով, վթարավերականգնողական աշխատանքները մեկնարկել էին մայիսի 27-ին, ընդհանուր առմամբ վերականգնվել է շուրջ 5000 գծամետր գազատար:

Աշխատանքներին ներգրավված էր ավելի քան 85 մարդ Լոռու ԳԳՄ բոլոր տարածքային տեղամասերից, սեղմ ժամկետներում տեղափոխվեց 15 միավոր անհրաժեշտ շինարարական տեխնիկա:

Աղետից անմիջապես հետո վարարումներից տուժած տարածքներ այցելեց «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ վարչական ապարատի աշխատանքային խումբը, տեղում ուսումնասիրվեց գազաբաշխման ցանցին հասցված վնասը, որից հետո Թումանյանի տարածքային տեղամասին օպերատիվ կերպով տրամադրվեցին վթարավերականգնողական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ նյութերը՝ խողովակներ, փականներ, ներկանյութ եւ այլն:

«Թումանյանի տարածաշրջանում վթարավերականգնողական աշխատանքներն տեւել են շուրջ 20 օր: Աշխատանքներին մասնակցել է մեր տարածքային ծառայության ողջ անձնակազմը: Մինչ վթարային բրիգադները վերականգնում էին վնասված գազատարները, մեր մյուս գործընկերները աջակցում էին նյութերի բեռնաթափմանը, տեղափոխմանը, այլ աշխատանքներին: Աշխատել ենք գրեթե շուրջօրյա, որպեսզի կարողանանք հնարավորինս սեղմ ժամկետներում վերականգնել գազամատակարարումը, քանի որ մեր տարածաշրջանում գազազրկված էր շուրջ 3 000 բնակիչ-բաժանորդ», - նշում է Ա. Իսրայելյանը:

Թումանյանի SS պետի տեղակալի խոսքով, գազաբաշխման ցանցը տարածաշրջանի աղետից տուժած բնակավայրերում ամբողջությամբ վերականգնված է, բաժանորդների գազամատակարարումն իրականացվում է անխափան եւ բնականոն ռեժիմով: Որոշ հատվածներում կառուցվել են ժամանակավոր գազատարներ, որոնք կվերատեղադրվեն վարարումներից վնասված ճանապարհային ենթակառուցվածքի վերականգնումից հետո:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՏԱՆ ՊԱՅԹՅՈՒՆ ԵՎ ՓԼՈՒԶՈՒՄ

Օգոստոսի 1-ին՝ ժամը 06:16-ին, Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոն տեղեկություն է ստացվել, որ Ոսկեհասկ գյուղի 1-ին փողոցի տներից մեկում տեղի է ունեցել պայթյուն՝ փլուզմամբ. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Նախնական, դեռեւս ստուգման ենթակա տվյալներով պայթյունը տեղի է ունեցել հեղուկ գազի բալոնից արտահոսքի պատճառով՝ տան բնակչի կողմից գազօջախը միացնելու ընթացքում:

Դեպքի առթիվ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Ախուրյանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 412-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Դեպքի վայր են մեկնել Ախուրյանի քննչական բաժնի քննիչներ՝ անհետաձգելի, առաջնային քննչական գործողություններ կատարելու նպատակով:

Պարզվել է, որ, դեռեւս չբացահայտված հանգամանքներում, 1-ին փողոցի 4-րդ նրբանցքի տներից մեկում տեղի է ունեցել պայթյուն՝ փլուզմամբ, ինչի հետեւանքով Ն. Խ.-ն (ծնված 1993 թ.) եւ Փ. Խ.-ն (ծնված 1967 թ.) հոսպիտալացվել են բժշկական կենտրոն, որտեղ նրանց առողջական վիճակը գնահատվել է միջին ծանրության:

Ձեռնարկվել են անհրաժեշտ քննչական եւ վարչության այլ գործողություններ՝ դեպքի հանգամանքները պարզելու նպատակով:

Փրկարարները փլատակներից դուրս են բերել Լ. Խ.-ի (ծնված 2012 թ.) մարմինը, շտապօգնության աշխատակիցներն արձանագրել են վերջինիս մահը. փրկարարները դին մոտեցրել են շտապօգնության ավտոմեքենային:

ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄ Է ՇՏԿԵԼՈՒ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երեւանի քաղաքապետի մամուլի քարտուղար Հայկ Կոստանյանն անդրադարձել է ՍԲ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու մոտ կառուցվող շատրվանների եւ տարածքի բարեկագման աշխատանքներին ու նոր տնկված տույաների չորացմանը:

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու մոտ կառուցվող շատրվանների եւ տարածքի բարեկագման, ինչպես նաեւ տույաների չորացման եւ տույաների գնի վերաբերյալ տեղեկացնում եմ՝ Տույաների գնի հետ կապված Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի վերահսկողության վարչությունն իրականացնում է ուսումնասիրություն, որի ավարտից հետո կտրվի համապատասխան մեկնաբանություն:

Տույաների չորացման, ինչպես նաեւ շինարարության ընթացքում եւ երաշխիքի ժամկետի շրջանում առաջացած թերությունների դեպքում շինարարը պարտավոր է վերականգնել այն եւ բերել պատշաճ տեսքի:

Նշեմ, որ տարածքի բարեկարգման աշխատանքներն ավարտված չեն եւ Երեւանի քաղաքապետարանին հանձնված չեն: Հավելեմ նաեւ, որ Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության եւ բարեկարգման վարչությունում դեռ նախորդ շաբաթ տեղի է ունեցել շինարարի հետ հանդիպում, վերջինս պատրաստակամ է շտկել բոլոր այն թերությունները, որոնք առաջացել են շինարարական աշխատանքների ընթացքում, այդ թվում ծառերի մասով»:

Նշենք, որ Երեւանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Քրիստինե Վարդանյանն այցելել էր Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հարեւանությամբ քաղաքապետարանի հիմնած նոր այգին ու բացահայտել, որ տնկած տույաները չորացել են:

«Երկու ամիս առաջ Երեւանի քաղաքապետարանը մեծ շուքով բոլորիս նվիրեց այս բարեկարգված տարածքը: Արտակարգ ստացվել է Տույաների հիշատակի պուրակը, շնորհակալ ենք: Հաստատ, էն ժավելով բիձուկն է այրել արմատները, արագ փորձաքննություն արեք ու մամուլը ողողեք, լավ ստացվում է: Հավելեմ, մեկ տույան արժե 20000-40000 դրամ, ի դեպ, բացարձակ կարեւոր չէ՝ ով է վճարել, գրագետ ընտրեիք, սա չէիք ստանա, կրթվեք, ամոթ է», - գրել էր նա:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 15 պատահար. 2 մարդ մահացել է, 34-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՈՍԿՈՒ ԳՆԻ ԹԱՐՄԱՑՈՒՄՆԵՐԸ

Ոսկու գինը Comex բորսայում (Նյու Յորքի ապրանքային բորսայի ստորաբաժանում) սակարկությունների ընթացքում թարմացրել է իր պատմական առավելագույն ցուցանիշը՝ մեկ տրոյական ունցիայի դիմաց հասնելով 2500 դոլարի: Այդ մասին տեղեկացնում է ՏԱՍՍ գործակալությունը: Երեւանի ժամանակով 05:28-ի դրությամբ թանկարժեք մետաղի գինը մեկ տրոյական ունցիայի դիմաց կազմել է 2501 դոլար (+1,65 %):

Երեւանի ժամանակով 05:31-ի դրությամբ ոսկու արժեքը աճն արագացրել է՝ մեկ ունցիայի դիմաց հասնելով 2502 դոլարի (+1,56 %):

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Նաիրի» հրատարակչություն ՓԲԸ-ի հարգելի՛ բաժնետերեր, տեղեկացնում ենք ձեզ, որ 2024 թվականի օգոստոսի 8-ին՝ ժամը 15:30-ին, «Նաիրի» հրատարակչություն ՓԲԸ-ում (Տերյան 91) տեղի կունենա «Նաիրի» հրատարակչություն ՓԲԸ-ի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը:

ԱՐՏԱՀԱՆՈՒՄՆ ԱՐԳԵԼՎԵԼ Է

Ռուսաստանում օգոստոսի 1-ին ուժի մեջ է մտել բենզինի արտահանման արգելքը, որը կտեւի մինչեւ հոկտեմբերը ներառյալ: Դիզվառելիքի մասով նմանատիպ միջոց չի ձեռնարկվել:

ՌԴ էներգետիկայի նախարարի առաջին տեղակալ Պավել Սորոկինի խոսքով՝ կառավարությունն այդ որոշումը կայացրել է շուկան կայունացնելու, այն առաջարկով հագեցնելու եւ գների, այդ թվում՝ մեծածախ գների կտրուկ աճ թույլ չտալու նպատակով:

Ռուսաստանի Դաշնությունից բենզինի արտահանման արգելքը գործել է 2023 թվականի սեպտեմբերի 21-ից մինչեւ նոյեմբերի 17-ը՝ շարժիչային վառելիքի ներքին շուկայում գնային իրավիճակի կայունացման նպատակով: Նմանատիպ միջոցը տարածվել է նաեւ դիզելային վառելիքի վրա:

Ընդ որում, ՌԴ կառավարությունը 2024 թվականի մարտի 1-ից մինչեւ օգոստոսի 31-ը կրկին սահմանել էր բենզինի (բայց ոչ դիզվառելիքի) արտահանման ժամանակավոր արգելք, որը, սակայն, դադարեցվել էր մայիսի վերջից մինչեւ հուլիսը ներառյալ:

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Հայաստանը կմասնակցի Չինաստանի Շանհայ քաղաքում նոյեմբերի 5-10-ն անցկացվելիք Չինաստանի 7-րդ միջազգային ներմուծման ցուցահանդեսին (CIIE), որի նպատակն է նպաստել փոքր եւ միջին բիզնեսի կայուն զարգացմանը:

Այս մասին հայտնում է Հայաստանի էկոնոմիկայի նախարարությունը:

Նշվում է, որ մինչեւ այժմ ցուցահանդեսին մասնակցել են 60 երկրների ավելի քան 800 ընկերություններ:

«ԱԿԲԱ» ԲԱՆԿ

55 ՄԼՆ ԵՎՐՈ ԿՈՒՂՂԻ ՄՓՄՁ-ՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

«Ակբա» բանկը Հայաստանի առեւտրային բանկերի շարքում առաջինն է, որ ուղիղ համագործակցություն է մեկնարկում Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) հետ՝ ԵՆԲ Գլոբալից (ԵՆԲ զարգացման մասնաճյուղ) ներգրավելով 55 միլիոն եվրո ֆինանսական միջոցներ:

Ներգրավված միջոցներն «Ակբա» բանկը կուղղի Հայաստանում մանր, փոքր եւ միջին ձեռնարկությունների զարգացման համար:

Համագործակցությունը հիմնված է ԵՆԲ Գլոբալի հանձնառության վրա՝ աջակցելու Հայաստանի տնտեսական զարգացմանը եւ խթանելու մասնավոր հատվածի աճը եւ աշխատատեղերի ստեղծումը: ԵՆԲ Գլոբալից ներգրավված միջոցներն «Ակբա» բանկի կողմից կուղղվեն տեղական մասնավոր հատվածին՝ խթանելով տնտեսական զարգացումն ու ներդրումները: Ակնկալվում է նաեւ, որ ավելի քան 200 ՓՄՁ-ներ, որոնց թվում հատուկ ուշադրության են արժանանալու կանանց կողմից ղեկավարվող բիզնեսները, կօգտվեն այս հնարավորությունից՝ ապահովելով նաեւ լրացուցիչ աշխատատեղեր:

«Ուրախ ենք «Ակբա» բանկի հետ գործընկերություն մեկնարկելու առիթով: Մեր նպատակն է նպաստել ուժեղ եւ դիմացկուն տնտեսությունների կայացմանը, որոնք նաեւ աշխատատեղեր են ստեղծում: Այս համագործակցությունը կնպաստի հայկական փոքր եւ միջին ձեռնարկությունների աճին եւ մրցունակության բարձրացմանը, այդ թվում՝ երկրի գյուղական շրջաններում, եւ կխթանի ձեռներեցությունը՝ համաձայն Եվրամիության եւ Հայաստանի առաջնահերթությունների»,- նշել է Եվրոպական ներդրումային բանկի փոխնախագահ Թերեզա Չերվինսկան:

««Ակբա» բանկն այս պահին Հայաստանի առեւտրային բանկերի շրջանում առաջին ուղիղ եւ խոշոր համագործակցությունն է մեկնարկում Եվրոպական ներդրումային բանկի հետ՝ներգրավելով 55 միլիոն եվրո: «Ակբա»-ն ամբողջ Հայաստանում մանր, փոքր, միջին եւ խոշոր ձեռնարկությունների առաջատար ֆինանսավորողներից մեկն է, եւ այս միջոցների ներգրավումը մեզ թույլ կտա լրացուցիչ խթան հաղորդել ՄՓՄՁ-ների զարգացմանը: Մեզ համար առաջնային նպատակ է ՄՓՄՁ-ների զարգացմանը նպաստելը, քանի որ վերջիններս համարվում են մեր երկրի տնտեսության շարժիչ ուժը»,- նշել է «Ակբա» բանկի գլխավոր գործադիր տնօրեն Հակոբ Անդրեասյանը:

«Մենք հաստատակամ ենք վստահեցնելու բանկերին, որ վարկի պայմանները՝ ԵՄ դրամաշնորհով ամրապնդված տեղական արժույթի արժեւորմամբ, կլինեն շատ գրավիչ: ՀՆՀ դրամաշնորհի վերջնականացման հետ մեկտեղ, այս նախաձեռնությունը կլրացնի ԵՆԲ-ի սեփական ռիսկային գործողությունները՝ բարձրացնելով ֆինանսական մատչելիությունը եւ աջակցությունը տեղական բիզնեսներին»,- ասել է Հայաստանում ԵՄ պատվիրակության գործերի ժամանակավոր հավատարմատար Յան Պլեշինգերը:

Եվրոպական ներդրումային բանկի եւ ԵՆԲ Գլոբալի մասին

Եվրոպական ներդրումային բանկը Եվրոպական Միության երկարաժամկետ ֆինանսավորման հաստատություն է, որը պատկանում է անդամ պետություններին: Այն տրամադրում է երկարաժամկետ ֆինանսավորում հուսալի ներդրումների համար՝ աջակցելով ԵՄ քաղաքականության նպատակներին չորս առաջնահերթ ոլորտներում՝ ենթակառուցվածքներ, նորարարություն, կլիմա եւ շրջակա միջավայր, ՓՄՁ-ներ:

ԵՆԲ Գլոբալը Եվրոպական ներդրումային բանկի մասնագիտացված ստորաբաժանում է, որի նպատակն է զարգացնել միջազգային համագործակցությունները եւ զարգացման ֆինանսավորման ազդեցությունը: Team Europe-ի կազմում ԵՆԲ Գլոբալը խթանում է ուժեղ, կենտրոնացած համագործակցություններ՝ գործակցելով այլ զարգացման ֆինանսավորման հաստատությունների եւ քաղաքացիական հասարակության հետ՝սերտորեն աշխատելով այլ բազմակողմ զարգացման բանկերի հետ: ԵՆԲ Գլոբալն ավելի է մոտեցնում ԵՆԲ խմբին տեղի մարդկանց, ընկերություններին եւ հաստատություններին ամբողջ աշխարհում գործող գրասենյակների միջոցով՝ ներառյալ Հարավային Կովկասի տարածաշրջանային ներկայացուցչությունը, որն ընդգրկում է նաեւ Հայաստանը:

«Ակբա» բանկի մասին

«Ակբա» բանկը Հայաստանի բանկային համակարգի առաջատարներից է, երկրի գյուղոլորտի ֆինանսավորման բացարձակ առաջատարը: 2021 թվականին իրականացված բաժնետոմսերի առաջնային հրապարակային տեղաբաշխումից (IPO) հետո «Ակբա» բանկն ունի ավելի քան 5600 բաժնետեր: Թվային նորագույն լուծումների ներդրման, ինչպես նաեւ նոր տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ բանկն անդադար զարգացնում է տրամադրվող ֆինանսական ծառայությունների քանակն ու որակը: «Ակբա»-ն ներկայացված է Հայաստանի բոլոր մարզերում, ունի 65 մասնաճյուղ, համարվում է երկրի եւ ֆինանսական համակարգի խոշոր գործատուներից մեկը:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Աճուրդի առաջին փուլը կայանալու է 19.08.2024 թվականին, ժամը 12:00-ին, ՀՀ, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում, այնուհետեւ, կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 30.12.2024թ.-ին:

Աճուրդի կազմակերպիչն է «Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ), որն իրականացնելու է հետեւյալ լոտի (այսուհետ՝ Լոտ) բաց աճուրդ «հոլանդական» եղանակով:

Աճուրդի պայմաններն են.

- Լոտ՝ ՀՀ, Կոտայքի մարզ, համայնք Նաիրի, գյուղ Պառոշյան հասցեում գտնվող 10 հա հողամաս,
- Լոտի մեկնարկային գինը՝ 50000000 (հիսուն միլիոն) ՀՀ դրամ,
- Միջնորդավճար՝ Լոտի ձեռքբերման գնի 1 տոկոսի չափով (այսուհետ՝ Միջնորդավճար),

Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը.

- ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ մասնակցի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը,
- իրավաբանական անձի դեպքում՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի եւ կամ ներկայացուցչի անձը հաստատող փաստաթուղթը եւ լիազորությունները հաստատող փաստաթուղթը, մասնակցի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով աճուրդավարի մուրճիկի 3 (երեք) հարվածից առաջ առաջարկել է ամենաբարձր գինը: Աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցը Լոտի գինը եւ Միջնորդավճարը վճարում է աճուրդի կայացման օրվան հաջորդող 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվանցելով մուծված նախավճարի գումարը: Սահմանված ժամկետում գնորդի կողմից վճարումներ չկատարելու դեպքում Կազմակերպիչը կարող է աճուրդի արդյունքները համարել չեղյալ: Կարող են սահմանվել Լոտի գնի վճարման այլ ժամկետներ եւ չափաբաժիններ՝ վաճառողի եւ գնորդի կողմից համապատասխան փոխհամաձայնությամբ:

Աճուրդի մասնակցության նախավճարը կազմում է Լոտի ընթացիկ մեկնարկային գնի 1 (մեկ) տոկոսը, որի վճարման վերջնաժամկետը յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն է: Նախավճարը վճարվում է անկանխիկ՝ հետեւյալ հաշվեհամարին՝ 2470103374150000, կամ Կազմակերպչի կողմից տրամադրված այլ հաշվեհամարին, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում այն կարող է նաեւ վճարվել կանխիկ եղանակով աճուրդի կայացման հասցեում՝ Կազմակերպչի դրամարկղ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում:

Լոտին կարող եք ծանոթանալ սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 10:00-ից մինչեւ 18:00-ը՝ զանգահարելով ստորեւ նշված հեռախոսահամարին եւ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու եւ վերջինիս պատճենն անվճար ստանալու համար դիմել Կազմակերպչին՝ ստորեւ նշված հասցե:

Կազմակերպիչը կարող է կատարել սույն ծանուցման փոփոխություններ եւ լրացումներ, որոնք կարող են իրականացվել այնպես, ինչպես կատարվել է աճուրդի մասին հրապարակային ծանուցումը: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել ստորեւ նշված հեռախոսահամարին կամ այցելել ստորեւ նշված կայքերը:

էլ. փոստ՝ llcbst@yahoo.com
հասցե՝ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31
հեռ.՝ +374 11 56 45 13
կայք՝ www.llcbst.am, www.borsa.am

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

«ՄԵԾ ԵՎ ՓՈՔՐ ՍՅՈՒՆԻՔՆԵՐ»

ՀՈՒՇԱԿՈԹՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Արցախի եւ Հայաստանի հանրապետությունների սահմանագլխին գտնվող «Մեծ եւ Փոքր Սյունիքներ» հուշակոթողի կարգավիճակի վերաբերյալ, ինչպես տարբեր լրատվականներ ու անհատներ, այնպես էլ Monumentwatch նախաձեռնությունը ահազանգել են դեռեւս 2023 թվականի ապրիլին:

Հիշեցնենք, որ 2023 թվականի մարտի 29-ին Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի նախկին երթուղու փակումից եւ արդեն ապրիլի սկզբին՝ նոր երթուղու արեւմտյան հատվածի (Կոռնիձոր եւ Տեղ գյուղերով անցնող) գործարկումից հետո Ադրբեջանի վերահսկողության տակ անցավ նաեւ Սյունիքի եւ Արցախի սահմանագլխին կառուցված «Մեծ եւ Փոքր Սյունիքներ» կամ «Մայր Հայրենիք» կոչվող հուշակոթողը:

Հուշարձանը կառուցվել է 2004 թվականին Մեծ եւ Փոքր Սյունիքների միասնության գաղափարով: Հուշարձանի ճարտարապետը Սեւադա Ջաքարյանն է, կառուցվել է Սյունիքի նախկին մարզպետ Սուրեն Խաչատրյանի նախաձեռնությամբ եւ Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրենների խորհրդի նախագահ Մաքսիմ Հակոբյանի ֆինանսավորմամբ: 2007 թվականին հուշարձանի տարածքում կանգնեցվել է նաեւ խաչքար:

Սուղ ժամկետներում հուշահամալիրի տեղափոխության անհնարինությունը հաշվի առնելով՝ հայկական կողմը 2023 թվականի ապրիլի 3-ին տեղափոխեց միայն խաչքարը , եւ սա կարելի է համարել եզակի բացառություն, երբ հուշարձանը հանվում է իր պատմական լանդշաֆտից, կտրվում իր ամբողջականությունից՝ հանուն փրկության:

Ինչպես եւ եզրակացվում էր, «Գուգլ»-ի արբանյակային քարտեզի 2024 թվականի ապրիլ ամսի թարմացումով արդեն երեւում է, որ հուշարձանը հողին է հավասարեցվել:

Հայաստանի արձագանքը

1954 թվականի Հաագայի կոնվենցիան, որը նաեւ մյուս միջազգային պայմանագրերի հիմքն է, իր առաջին հոդվածով սահմանում է. «Մշակութային արժեքը անկախ ծագումից կամ սեփականատիրոջից, յուրաքանչյուր ժողովրդի համար մեծ նշանակություն ունեցող շարժական կամ անշարժ ժառանգությունն է, ինչպիսիք են ճարտարապետության, արվեստի կամ պատմության հուշարձանները, անկախ դրանց կրոնական կամ աշխարհիկ բնույթից»: Համաձայն «Զինված հակամարտությունների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության մասին» 1954 թվականի Հաագայի կոնվենցիայի 4-րդ հոդվածի՝ արգելված է մշակութային ժառանգության հանդեպ վանդալիզմի, գողության, կողոպուտի, յուրացման, թշնամանքի եւ հաշվեհարդարի ցանկացած գործողություն:

«Մեծ եւ Փոքր Սյունիքներ» հուշակոթողը, Ադրբեջանի վերահսկողության տակ անցնելուց հետո, պետք է պաշտպանված լիներ վերոնշյալ կոնվենցիայի Առաջին Արձանագրությամբ, որը նախատեսված է գրավյալ (օկուպացված, յուրացված) տարածքներում մշակութային կամ հոգեւոր արժեքների պաշտպանության համար: Արձանագրության 1-ին կետը նշում է, որ «Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է կանխել զինված հակամարտության ժամանակ իր կողմից գրավված տարածքից մշակութային արժեքների վնասը, արտահանումը, կամ փոխանցումը երրորդ երկիր»: Նկատենք, որ Ադրբեջանը, 1993 թվականի սեպտեմբերի 20-ից ընդունել է այս արձանագրությունը եւ պարտավորվել հետեւել դրույթներին:

Այնուամենայնիվ, ինչպես եւ ցույց են տալիս այս եւ դրան նախորդած բազմաթիվ դեպքերը, Ադրբեջանն իրականացնում է մշակութային ցեղասպանություն՝ ոտնահարելով միջազգային կոնվենցիաներով ստանձնած իր պարատավորությունները:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՇԽԱՐՀԻ 5 ԱՄԵՆԱՄԱՔՈՒՐ ԵՐԿՐՆԵՐԸ

Ամեն տարի Յեյլի համալսարանի, Կոլումբիայի եւ Համաշխարհային տնտեսական ֆորումի հետազոտողները կազմում են աշխարհի ամենամաքուր երկրների ցանկը՝ հիմնվելով 40 ինդիկատորների վրա, 11 կատեգորիաներում՝ կենսունակության, կլիմայի փոփոխության եւ շրջակա միջավայրի առողջության վրա:

2024 թվականին աշխարհի ամենամաքուր երկրների հնգյակում՝ ըստ World Population Review-ի հետեւյալներն են.

Դանիա

Դանիան պաշտոնապես ճանաչվել է աշխարհի ամենամաքուր երկիրը 2024 թվականին: Ընդհանուր բնապահպանական կատարողականի ինդեքսով (EPI) այն նաեւ լիովին էկոլոգիապես մաքուր է: Դանիան այս տեղը վաստակել է իր կեղտաջրերի մաքրման տպավորիչ կայանների, ծովային պահպանվող տարածքների եւ ջերմոցային գազերի արտանետումները նվազեցնելու եւ կլիմայի փոփոխությունը կանխելու համապարփակ ու արդյունավետ քաղաքականության շնորհիվ:

Միացյալ Թագավորություն

Միացյալ Թագավորությունն ունի մոտավորապես 67.5 միլիոն բնակչություն, բայց նաեւ համարվում է աշխարհի երկրորդ ամենամաքուր երկիրը: Այս վարկանիշը պայմանավորված է Մեծ Բրիտանիայի՝ խմելու ջրի, սանիտարական մաքրման եւ աղտոտող նյութերի արտանետումների ցուցանիշներով:

Ֆինլանդիա

Ֆինլանդիան եւս ունի բնապահպանական կատարողականի ինդեքսի բարձր ցուցանիշ, ինչին նպաստել է երկրի սանիտարական վիճակը, խմելու ջուրը եւ անտառների եւ վայրի բնության պահպանության առաջնահերթությունը: Ֆինլանդիան նույնպես իր ռեսուրսների մեծ մասը տրամադրում է վերականգնվող էներգիային եւ զգալիորեն կրճատել է ծանր մետաղների ազդեցության ենթարկվածությունը:

Մալթա

2020 թվականին Մալթան աշխարհի ամենամաքուր երկրների շարքում զբաղեցնում էր 23-րդ տեղը: Զարմանալի է, որ իր գեղեցիկ լողափերով, ժայռային գոյացություններով, խմելու ջրով եւ ազոտի օքսիդի արտանետումներով Մալթան 2024 թվականին աշխարհի ամենամաքուր երկրների վարկանիշում ներկայումս չորրորդ տեղում է:

Շվեդիա

2024 թվականին Շվեդիան աշխարհի հինգերորդ ամենամաքուր երկիրն է՝ EPI=72.7 էկոլոգիական կատարողականի ինդեքսով: Շվեդիան կայուն զարգացումը համարում է իր հիմնական նպատակներից մեկը եւ հետեւաբար ունի ցածր ածխաթթու գազի արտանետումներ: Այս երկիրը առաջնահերթություն է տալիս բնությանը՝ պահպանելով հազարավոր հեկտար անտառներ:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀՀ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՄՐՑԵԼՈՒՅԹՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Ներկայացնում ենք հայ մարզիկների մրցելույթների ժամանակացույցը Փարիզի օլիմպիական խաղերում.

Բռնցքամարտ

Դավիթ Չալոյան - քառորդ եզրափակիչ՝ օգոստոսի 3, Երեւանի ժամանակով՝ 00:08, կիսաեզրափակիչ՝ օգոստոսի 9, Երեւանի ժամանակով՝ 00:02, եզրափակիչ՝ օգոստոսի 11, Երեւանի ժամանակով՝ 00:51:

Հունահռոմեական ոճի ըմբշամարտ

Մալխաս Ամոյան (77 կգ), Արթուր Ալեքսանյան (97 կգ) - մեկնարկային 1/8 եզրափակիչներ՝ օգոստոսի 6, Երեւանի ժամանակով՝ 13:30, եզրափակիչներ՝ օգոստոսի 7, 77 կգ քաշային կարգ՝ Երեւանի ժամանակով՝ 21:55, 97 կգ քաշային կարգ՝ 22:05:

Սլավիկ Գալստյան (67 կգ) - մեկնարկային 1/8 եզրափակիչ՝ օգոստոսի 7, Երեւանի ժամանակով՝ 11:30, եզրափակիչներ՝ օգոստոսի 8, Երեւանի ժամանակով՝ 21:55:

Աթլետիկա

Երվանդ Մկրտչյան (800 մ վազք) - որակավորման փուլ՝ օգոստոսի 6, Երեւանի ժամանակով՝ 13:55, եզրափակիչը՝ օգոստոսի 10, Երեւանի ժամանակով՝ 21:25:

Ազատ ոճի ըմբշամարտ

Արսեն Հարությունյան (57 կգ) - մեկնարկային 1/8 եզրափակիչ՝ օգոստոսի 8, Երեւանի ժամանակով՝ 13:30, եզրափակիչը՝ օգոստոսի 9, Երեւանի ժամանակով՝ 21:55-ին:

Ծանրամարտ

Անդրանիկ Կարապետյան (89 կգ) - օգոստոսի 9, Երեւանի ժամանակով՝ 17:00:

Ազատ ոճի ըմբշամարտ

Վազգեն Թեւանյան (65 կգ) - մեկնարկային 1/8 եզրափակիչ՝ օգոստոսի 10, Երեւանի ժամանակով՝ 13:30, եզրափակիչը՝ օգոստոսի 10, Երեւանի ժամանակով 14:25:

Ծանրամարտ

Գարիկ Կարապետյան (102 կգ) - օգոստոսի 10, Երեւանի ժամանակով՝ 13:30, Վարազդատ Լալայան (+102 կգ) - օգոստոսի 10, Երեւանի ժամանակով՝ 22:30:

ՋՈԿՈՎԻՉԸ ԴՈՒՐՍ ԵԿԱՎ ՔԱՌՈՐԴ ԵԶՐԱՓԱԿԻՉ

Աշխարհի երկրորդ ռակետ, սերբ թենիսիստ Նովակ Ջկոկովիչը դուրս է եկել Փարիզում ընթացող Օլիմպիական խաղերի թենիսի անհատական մրցաշարի քառորդ եզրափակիչ:

Երկրորդ շրջանի խաղում սերբ մարզիկը 7:5, 6:3 հաշվով հաղթել է աշխարհի 70-րդ ռակետ, գերմանացի թենիսիստ Դոմինիկ Կյոպֆերին, հանդիպումը տեւել է 1 ժամ 37 րոպե:

Փարիզի Օլիմպիական խաղերի քառորդ եզրափակչում Նովակ Ջոկովիչը կհանդիպի աշխարհի 11-րդ ռակետ, հույն թենիսիստ Ստեֆանոս Ցիցիպասի հետ, որը երրորդ շրջանում 7:5, 6:1 հաշվով հաղթեց արգենտինացի թենիսիստ Սեբաստիան Բաեսին:

● *Օգոստոսի 6-ին՝ ժամը 21:00-ին, Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում կցուցադրվի «Դեկամերոն» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 6000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ հայրության որոշման պետական գրանցման համար:
(Տիգրան Շմավոնյան 32 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայրության ճանաչման պետական գրանցման համար երեխայի մոր եւ երեխայի նկատմամբ հայր ճանաչող անձի համատեղ դիմումը կարող է տրվել երեխայի մոր հղիության ընթացքում, ծննդի պետական գրանցման ժամանակ կամ դրանից հետո: «Նոտարիատի մասին» օրենքով սահմանված կարգով՝ նոտարի հաստատած իրավաբանական փաստի մասին նոտարական ակտի կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած համապատասխան վճռի հիման վրա հայրության ճանաչման պետական գրանցման համար դիմումը կարող է ներկայացվել բացառապես երեխայի ծննդի պետական գրանցումից հետո շահագրգիռ անձի կողմից: Հայրության ճանաչման պետական գրանցման համար ներկայացվում են՝

1) համատեղ դիմումի դեպքում՝ երեխայի նկատմամբ իրեն հայր ճանաչող անձի եւ երեխայի մոր անձը հաստատող փաստաթղթերը,

2) երեխայի ծննդի գրանցման մասին վկայականը կամ ակտային գրանցման տվյալները, եթե հայրության ճանաչման գրանցումը կատարվում է երեխայի ծննդի պետական գրանցումից հետո,

3) երեխայի մոր հղիությունը հաստատող բժշկական տեղեկանքը, եթե հայրության ճանաչման մասին դիմումը ներկայացվում է մինչեւ երեխայի ծնվելը,

4) երեխայի նկատմամբ իրեն հայր ճանաչող անձի անձը հաստատող փաստաթուղթը եւ երեխայի մոր բացակայության մասին իրավասու մարմնի տված փաստաթուղթը եւ երեխայի կենսաբանական հայր հանդիսանալու վերաբերյալ ԴՆԹ-ի որոշումը,

5) չափահաս անձի համաձայնությունը՝ իր նկատմամբ հայրություն ճանաչելու դեպքում,

6) տասը տարին լրացած երեխայի համաձայնությունը, եթե հայրության ճանաչման պետական գրանցման հետեւանքով նախատեսվում է փոխել նաեւ նրա անունը կամ ազգանունը,

7) «Նոտարիատի մասին» օրենքով սահմանված կարգով նոտարի հաստատած իրավաբանական փաստի մասին նոտարական ակտը կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած համապատասխան վճիռը եւ դիմողի անձը հաստատող փաստաթուղթը:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայրության ճանաչման պետական գրանցումը կատարվում է դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու նույն աշխատանքային օրը:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է աշխատող կանանց տրամադրվում հղիության եւ ծննդաբերության արձակուրդ:
Նարե Մարտիրոսյան (33 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Աշխատող կանանց տրամադրվում է հղիության եւ ծննդաբերության արձակուրդ՝ 140 օր (70 օր՝ հղիության, 70 օր՝ ծննդաբերության), 155 օր (70 օր՝ հղիության, 85 օր՝ ծննդաբերության)՝ բարդ ծննդաբերության, 180 օր (70 օր՝ հղիության, 110 օր՝ ծննդաբերության)՝ միաժամանակ մեկից ավելի երեխաներ ունենալու դեպքում: Այդ արձակուրդը հաշվարկվում է միասին եւ կնոջը տրամադրվում է ամբողջությամբ: Ժամանակից շուտ ծննդաբերելու դեպքում հղիության արձակուրդի չօգտագործված օրերը գումարվում են ծննդաբերության արձակուրդի օրերին: Նորածին որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված աշխատողին տրամադրվում է արձակուրդ՝ որդեգրելու կամ խնամակալ նշանակվելու օրվանից մինչեւ նորածնի 70 օրական (երկու եւ ավելի նորածին որդեգրելու կամ երկու եւ ավելի նորածնի խնամակալ նշանակվելու դեպքում՝ մինչեւ նորածինների 110 օրական) դառնալը:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Փոխնակ մոր միջոցով երեխա ունեցած աշխատողին (երեխայի կենսաբանական մորը) տրամադրվում է արձակուրդ երեխայի ծնվելու օրվանից մինչեւ նորածնի 70 օրական (երկու եւ ավելի նորածին երեխա ծնվելու դեպքում՝ մինչեւ նորածինների 110 օրական) դառնալը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Պալեոլիթի վաղ փուլերին վերաբերող բացառիկ բազալտե չոպերը հայտնաբերվել են Տավուշի մարզում գտնվող «Հաղթանակ-3» բացօթյա հնավայրից եւ թվագրվում են մեզանից 1.8-1.6 մլն տարի առաջ ժամանակահատվածով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+8 + 13 +19 + 23
Կոտայքի լեռներ	+8 + 12 +18 + 21
Կոտայքի նախալեռներ	+ 16+ 18 +25 + 27
Գեղարքունիք	+ 8+ 12 +17 + 20
Լոռի	+ 11+ 14 +18 + 21
Տավուշ	+ 14+ 18 +20 + 23
Արագածոտնի լեռներ	+ 8 + 11 +17 + 20
Արագածոտնի նախալեռներ	+16 + 18 +25 + 28

Արարատ	+ 18 + 20 +28 + 30
Արմավիր	+ 17+ 19 +28 + 30
Վայոց ձորի լեռներ	+10 + 12 +18 + 21
Վայոց ձորի նախալեռներ	+18 + 20 +28 + 30
Սյունիքի հովիտներ	+ 17 + 21 +23 + 26
Սյունիքի նախալեռներ	+ 11 + 14 +18 + 21
ԼՂՀ	+ 12 + 16 +18 + 20
Երեւան	+ 18 + 20 + 30 + 32

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **1.8.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*